

ՀՅԴ Պաշտօնաբեր

oketsan roke



ԴՐՈՇԱԿ



Մայիս N5 (1608)

2009

ՀՀ-ՈՒՄ 1920 Թ. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՇՈՒՐՁ

Արման Եղիազարյան
Պապական գիտությունների քեկնածու, ԵՊՀ

Հայաստանի Առաջին Հանրապետության լուսնային մեջ ամենահակասական խնդիրներից մեկը 1920 թ. մայիսին սեղի ունեցած բոլշևիկյան ելույթներն էին: Տասնամյակների ընթացքում իրողությունը ցուցադրվել է ամենահակադիր բևեռներից՝ ներկայացվելով կամ աղտոտության և կամ խռովության ձեւով: Երբեմն դրա հաղթանակը ներկայացվել է որդես ՀՀ և հայ ժողովրդի փրկության երաշխիք թուրքական նոր հարձակումից, որով հնարավոր կլիներ զրկապանել հեճազայում քեմալականների կողմից զավթված ՀՀ սարածքները: Այս լուսնաբանությամբ էլ ՀՀ կառավարությունը ներկայացվել է որդես անհեռաճես ու կարճամիտ իշխանություն, մի իշխանություն, որ սեփական ասիլը վեր է դասել համաժողովրդական ասիլից:

Մտնու լուսնական փաստերի անաչառ վերլուծությամբ փորձենք լուսնախառն սալ վերոհիշյալ և մի ասիլ ալլ կարևոր հարցերի: Ըստ որում, մենք կֆննարկենք հիմ-

նահարցը հայ և ասիլազգի բոլշևիկների ճամբարների անցուղարձի ուսումնասիրությամբ և մեծամասամբ նրանց ներկայացրած փաստերի լույսի ներքո: Հենց հիմնականում այդ փաստերն են, որ հնարավորություն են սալիս գնահատելու բոլշևիկների մայիսյան ելույթների հաղթանակի հնարավորությունները:

1920 թ. ադրիլի 28-ին Կարմիր բանակը գրավեց Բաբուն և խորհրդայնացրեց Ադրբեյջանը: Կարմիր բանակի այդ արագ հաջողությունը Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարները վերագրում են Ադրբեյջանի ղեկավարության ձգտմանը՝ Արցախի, Ձանգեզուրի և Նախիջևանի խնդիրների լուծումը Կարմիր բանակի միջոցով իրականացնելու, քանի որ մուսավաթական կուսակցությունը, որ իշխում էր Ադրբեյջանում մինչ այդ, ի գործը չեղավ իրող Ադրբեյջանի այդ խնդիրների կարգավորմանը¹: Բաբուն գրավելը որդես առաջնային անհրաժեշտություն և նույնակ Վ. Լենինը առաջ էր քաշել ղեռնա-

1920 թ. մարտի 17-ին՝ Մ. Օրջոնիկիձեին ուղղված մի հեռագրում, որդես նեւված էր, որ բոլշևիկներն իրենց բոլոր ուժերը դեք է ուղղեն Բաբուն գրավելուն՝ նկատի ունենալով այնտեղի նավթի անհրաժեշտությունը Կարմիր բանակի համար²: Խորհրդայնացնելով Ադրբեյջանը՝ Կարմիր բանակը հասավ ՀՀ սահմաններին, և վերջինս անմիջադեք հայնվեց ծանր իրադրության մեջ, քանի որ 2 օր անց՝ ադրիլի 30-ին, սեղ հասավ Ադրբեյջանի նորահաստ հեղկոմի վերջնագիրը ՀՀ կառավարությանը՝ դուրս բերել հայկական գորդերը Ղարաբաղից և Ձանգեզուրից՝ հակառակ դեղում սղառնալով լուսնեղավով: Պասսիսանի համար սղում էր 3 օր ժամանակ³: Մայիսի 1-ին ՀՀ կառավարությանը նույնասղո լուսնացնեղ լուսնուսակող վերջնագրով դիմեղ նաև Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհուրդը, ըստ որում, սալով 24 ժամ ժամանակ: ՀՀ կողմից վերջնագրի լուսնացնեղի չկասարման դեղում Կարմիր բանակի ղեկավարությունը սղառնում էր սեփական լուսնացնեղն իրագործել գեների ուժով⁴: Այս եղու վերջնագրերը ցույց սղեղին, որ ադրբեյջանական բոլշևիկները և Կարմիր բանակի ղեկավարությունը գործում էին համաձայնեղված: Իգուր չէ, որ եղու վերջնագրերի ժամկեղներն էլ ավարսվում էին միաժամանակ: Ձնայած ՀՀ կառավարությանը հաջողվեղ, սսացված վերջնագրերի մասին Մոսկվա հաղորդելով, կանխել վերոհիշյալ սղառնալիքների գործադրումը⁵, լուսնը դարձավ, որ այլևս բոլշևիկյան կառավարությունն ու Ադրբեյջանի հեղկոմը համատեղ ձգեղու են լուծել հայադրբեյջանական վեձի առարկա սարածքների հարցը իրող Ադրբեյջանի:

Այս ամենը ոգևորեղ հայ բոլշևիկներին: Նրանց թվաց, թե եղել է նաև իրենց աստեղային ժամը, հասել է ձիքս լուսնը ՀՀ-ում իշխանությանը սիրելու: Մանավանդ, մոտենում էին մայիսմեղկյան տնակասարությունները, որ հնարավոր էր օգտագործել բանվորների անունից հանդես եղեղ բոլշևիկների օգտին: Մայիսի 1-ի միջոցառումների ժամանակ ՀՀ սարբեր քաղաքներում բոլշևիկները փորձեղ կասարեղին ելույթներ կազմակերղելու, սակայն, ընդհանուր առմամբ, անհաջողության մասնվեղին: Մակայն ՀՀ-ում աղտոսամբության բարձրացումը և իշխանության գրավումը դրվել էր օրակարգում:

Մկզբում քննության առնենք ռազմավարական մի քանի խնդիրներ, որոնց անխուսափելիորեն բախվելու

էին հայ բոլշևիկները՝ ցույց սալու «աղտոսամբության» ձիքս կազմակերղման և իրականացման տեսական հիմքերը և դրանք համեմատելու իրականում սեղի ունեղածի հեղ: Այդ համեմատությունը մեղ հնարավորություն կսա հասկանալու հայ և օսար բոլշևիկների գործողությունները, վեր հանելու դրանց ասրժառիթները և ըմբռնելու «աղտոսամբության» հաղթանակի հնարավորությունները: Տրամաբանությունը թելադրում է, որ հայ բոլշևիկները դեք է փորձեղին «աղտոսամբությունը» սկսել եղու հնարավոր սարբերակներով կամ էլ դրանց իսելամիտ համակցումով: Քանի որ Ադրբեյջանը խորհրդայնացվել էր ու Կարմիր բանակը գեղվում էր ՀՀ սահմանին (32-րդ դիվիզիա), աղա հասկանալի է, որ նրա օգնությունը հուսացող հայ բոլշևիկները դեք է ձգեղին «աղտոսամբել» հայադրբեյջանական սահմանի հարևանությամբ գեղվող օղտոսաներում: Մսանալով Կարմիր բանակի օգնությունը, նրանք կարծեղին ՀՀ խորբերը: Մյուս կողմից՝ Ալեքսանդրաղուրը (Գյումրի) և որոք չափով նաև Կարսն ու Ղարաֆիլիսան (Վանաձոր) բանվորական քաղաքներ էին, առաջինը նաև ՀՀ մեծագույն քաղաքն էր, ուսի այնտեղ «աղտոսամբություն» սկսելը բոլշևիկներին որոքակի առավելություններ էր խոստանում: Իսկ ինչ վերաբերում է այս եղու հնարավորությունների համակցմանը, աղա այն կարող էր ՀՀ կառավարությանը դժվարին դրության մեջ դնել, քանի որ մի կողմից աղտոսամբում էր հանրաղեսության թիվ առաջին քաղաքը, մյուս կողմից՝ ձանաղարհ էր բացվում Կարմիր բանակի՝ ՀՀ ներխուժելու համար: Եթե դրան ավելացնենք Կարմիր բանակի վերոհիշյալ վերջնագիրը, աղա սղավորություն կսեղծվի, որ Կարմիր բանակը լիակասար հավանականությամբ դիմելու էր այդ քաղաքին, չնայած վերջնագիրը վերաբերում էր հայադրբեյջանական վիձելի սարածքներին: Ալնհայն է, որ ՀՀ խորհրդայնացումը այդ վեձերի լուծման համար

¹ Խոսիսյան Ա., Հայաստանի Հանրաղեսության ժաղումն ու զարղացումը, Քելյուր, 1968, էղ 252-253:
² Кадишев А., Интервенция и гражданская война в Закавказье, М., 1960, с. 230.
³ Ձնարղյան Է., 1920 թ.: Թուրք-հայկական լուսնեղազնը և տերությունները, Ե., 1997, էղ 14:
⁴ Անղ, էղ 15:
⁵ Անղ, էղ 16:



Ն. Նախիբանով

լավագույն հնարավորություններ էր ստեղծելու, իսկ ՀՀ բոլշևիկների «աղյուսակային» լավագույն հնարավորությունն էր ՀՀ-ն խորհրդայնացնելու: Հարկ է անդրադառնալ մեկ այլ շահ կարևոր հարցի, որին, որքան մեզ է հայտնի, դեռևս որևէ անդրադարձ չի եղել: Ո՞ւմ էին դիմելու հայ բոլշևիկները օգնության համար՝ Ադրբեջանի հեղկոմի⁶, թե՞ Ադրբեջանում սեղանակալից Վարմիր բանակի հրամանատարները: Հարցի կարևորությունը շատ մեծ է, քանի որ, ինչպես կեսնենեմ, սկզբում նրանք դիմեցին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նախիբանովին: Ի՞նչ էր դա նշանակում՝ Ն. Նախիբանովի գլխավորած Ադրբեջանի հեղկոմի և Վարմիր բանակի հրամանատարության փոխկապակցվածության սխալ սեսակե՞՞, թե՞ իրոք նման տրամաբանություն էին ստանում Ադրբեջանին կողմից նայողները: Սակայն այդ առաջին տրամաբանությունը սոսկ խաբկանք էր, որ հայ բոլշևիկները, ինչպես ցույց կտանք, զարգացրին բավական ուժ, երբ դրությունն անելանելի էր նրանց համար:

Բոլորովին չկասկածելով, որ հայ բոլշևիկները հաշվի էին առել մեր բերած սրամաքանական բոլոր զարգացումները, անդրադառնանք նրանց գործողությունների փաստական կողմին, որը ցույց կտա իրերի իրական դասկերպումը:

Սկզբնապես հայ բոլշևիկները որոշում էին կայացրել «աղյուսակային» սկսել խորհրդայնացված Ադրբեջանի սահմանից ոչ հեռու գտնվող Դիլիջանում, որտեղ Վարմիր բանակից օգնություն ստանալը շատ իրական էր⁶: Մայիսի 3-ին Ա. Նուրիջանյանը և Ա. Մուսայեյանը հեռագրեցին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նախիբանովին՝ խնդրելով օգնություն⁷: Տրամաբանությանը համադասասխան փայլեր են, որ կատարեցին հայ բոլշևիկները: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Բայց իրադարձություններն այլ կերպ զարգացան: Արդեն մայիսի 5-ին, այսինքն՝ Ն. Նախիբանովին ուղղված հեռագրից 2 օր անց, Ալեքսանդրապոլի փակ նիստում Ա. Նուրիջանյանը հարց դրեց՝ լուրջապես «աղյուսակային» սկսել Ալեքսանդրապոլում և ոչ թե Դիլիջանում: Դիլիջանի ներկայացուցիչները լուրջում էին նախնական արքայի, այսինքն՝ Դիլիջանից «աղյուսակային» սկսելու վրա, բայց հաղթեց Ա. Նուրիջանյանի սեսակեցը, և «աղյուսակային» սկսվեց Ալեքսանդրապոլում մայիսի 10-ին⁸: Ի՞նչ կարող էր սեղի ունեցած լինել, որ սխիդեր Ա. Նուրիջանյանին կհրուս փոփոխություն կատարել «աղյուսակային» արդեն ծրագրված ռազմավարության մեջ: Միայն մեկ դասառ կարող էր լինել՝ Ն. Նախիբանովը մերժել էր հայ բոլշևիկների խնդրանքը կամ էլ՝ թողել անդասասխան: Նրա մերժման դասառաբանությունների դարգաբանմանը կանդրադառնանք ստորև, սակայն ստեղծված իրավիճակում հայ բոլշևիկների համար դա այնքան էլ կարևոր չէր, կարևորը մերժումն էր, որ ի սկզբանե կանխագուշակում էր հայ բոլշևիկների դարձությունը: Եթե Ն. Նախիբանովը մերժում է օգնություն ցույց տալու խնդրանքը, ապա Դիլիջանում «աղյուսակային» սկսելը ոչ մի կարևորություն չունի: Միակ հնարավորությունը Ալեքսանդրապոլում «աղյուսակային» էր: Խնդիրն այն է, որ մայիսի 10-ից սոցիալական արքայությունների ժամանակ բոլշևիկներն անցել

6 «Մայիսյան աղյուսակային» Հայաստանում (փաստաթղթերի և դրվագների ժողովածու)», Ե., 1930, էջ 104-105:

7 Кадышев А., с. 287.

8 «ՄԱՀ», էջ 105:



Դաստամաս Կանայան (Դր)


էին ամեն չափ ու սահման, և նրանց մնում էր միայն «աղյուսակային», այլապես բոլոր նրանք կհայտնվեին բանսում:

Ալեքսանդրապոլում բոլշևիկյան ելույթն սկսվեց մայիսի 10-ին: Առանց դրսի օժանդակության այդ ելույթը շուտով հայ բոլշևիկներին կանգնեցրեց համարյա անլուծելի խնդիրների առջև: Բանվորական աղյուսակայինը ՀՀ-ում կարող էր ունենալ զուտ սեղային բնույթ՝ սահմանափակվելով արդյունաբերական ֆիչ թվով ֆադաբներում: Այսինքն՝ հաղթանակի ոչ մի հնարավորություն չկար: Ելույթի ղեկավար Ա. Նուրիջանյանն ուժացումով հասկացավ դա: Պես էր դրսից օգնություն ստանալ, այլապես ջախջախումն անխուսափելի էր: Իսկ ո՞ւմ դիմել: Ն. Նախիբանովից այլևս հույս չկար: ՀՀ սահմանին՝ Աղսաֆայում, կանգնած էր Վարմիր բանակի 32-րդ դիվիզիան: Ա. Նուրիջանյանը որոշեց դիմել նրանց օգնությանը: Մայիսի 13-ին հայ բոլշևիկներից Այվազյան ազգանունով մեկն անցավ ՀՀ սահմանն ու գնաց Աղսաֆա՝ վերհիշեցավ դիվիզիայի հրամանատարության մոտ: Այդ դիվիզիայի որոշ ուժեր մտան Քարվանսարա մայիսի 20-ին⁹: Հետաքրքիր փաստ է, եթե հաշվի առնենք, որ այն սեղի է ունեցել մեծ ուժացումով՝ սեփական մոտիվը ՀՀ դարձնելով անօգուտ, եթե, իհարկե, այդ մոտիվը կատարվել էր հայ բոլշևիկներին օգնելու նպատակով: Նախ սեսնենք, թե ինչպիսիքն էր այդ «գործառնա» ուժը: Կ. Սասունին վկայում է, որ դրա թվաքանակը 30 ձիավոր է եղել՝ թուրք և ռուս¹⁰: Սովետական դասառաբանները նշում են, որ ՀՀ են մեկ Վարմիր բանակի մի քանի գործառնա¹¹: Ուրե՛կ կարծիք հայտնելուց առաջ նախ անդրադառնանք այդ գործառնա գործողություններին, որոնք դարձրուց ցույց կտան իրական դասկերպում: Մտնելով Քարվանսարա, գործառնաբն առաջ արժվեց մինչև Դիլիջան, որտեղ ստեղծվեց հեղկոմ, և կանգ առավ: Երբ խոսք եղավ նրա առաջխաղացման մասին, այդ գործառնաբն հրամանատարներն առաջարկեցին, որ սեղի բոլշևիկյան գործառնա անցնի հարձակման, իսկ իրենք գնան նրա ետևից: Միևնույն ժամանակ վերհիշեցավ բոլշևիկ Այվազյանն Աղսաֆայից արժվեց Բաբու՝ օգնություն խնդրելու¹²:

Ի՞նչն էր դասառը, որ այդ «գործառնաբն» այդքան զգուշանում էին բացահայտ գործողությունների դիմելուց: Կարող են լինել մի քանի դասառներ, սակայն մեզ թվում է, թե հիմնական դասառները երկուսն էին, ըստ որում՝ այդ երկու դասառները լրացնում էին մեկը մյուսին. ա-

ռաջին՝ ճիշտ է Կ. Սասունու բերած թիվը, ուստի՝ 30 հոգով այդ «գործառնա» ոչինչ անել չէր կարող, և երկրորդ՝ իրականում Վարմիր բանակի այդ գործառնաբն մոտիվը ՀՀ հետադարձում էր բոլորովին այլ նպատակ, որին կանդրադառնանք ֆիչ անց: Դա է աղյուսակային, որ բոլշևիկ Այվազյանը շարունակեց ճանադարհը Բաբու՝ այնտեղից օգնություն ստանալու հույսով: Պարզ է, որ մայիսի 13-ին Աղսաֆա հասած Այվազյանը չէր կարող սղասել, մինչև որ մայիսի 20-ին Վարմիր բանակի 32-րդ դիվիզիան «գործառնա» մտնեց Քարվանսարա, բացի այդ, մեզ թվում է, որ մայիսի 13-ի դրությամբ նա մերժում էր ստացել 32-րդ դիվիզիայի հրամանատարությունից: Վարմիր բանակի որոշումը՝ «գործառնա» մտնել Քարվանսարա, անկասկած ընդունվել էր ավելի ուշ՝ մեկ այլ որոշման իրականացմանը նպաստելու վճռականությամբ: Եթե «աղյուսակային» հայ բոլշևիկները իմանային այն մասին, որ Վարմիր բանակը

9 Անդ, էջ 108:
10 Սասունի Կ., Մայիսյան խոսքերը և թաքսակա աղյուսակայինը (Հայաստանը 1920 թվականին), Բեյրութ, 1968, էջ 122:
11 «ՄԱՀ», էջ 108:
12 Անդ:



Կարմիր բանակը Երևանում, 1920 թ.

ուժեր է մտնելու ՀՀ, դժվար թե զենքերը վայր դնեին, նրանք կաղաթեին ու կոլայֆարեին: Դա կարող էր փոխել «ատյասանբության» ընթացքը, քանի որ Ալեքսանդրապոլի ելույթի ճնշմանը նույնպես այն, որ արտաքին օգնությունից հույսները կտրած հայ բոլշևիկները, որոնք հասկացել էին ՀՀ-ում բոլշևիկյան հեղափոխում իրականացնելու սեփական հնարավորությունների անբավարարությունը, որոշեցին հանձնվելու վերաբերյալ բանակցություններ սկսել ֆառաֆին մոտեցող ՀՀ բանակի ներկայացուցիչների հետ¹³: Իսկ ո՞րն էր Կարմիր բանակի ուժերը մայիսի 20-ին Քարվանսարա մտնելու իրական նպատակը: Փաստերը մեզ այն համոզման են բերում, որ դրա նպատակն էր շեղել ՀՀ կառավարության ուսուցողությունը Ղարաբաղում նախադասարանական դեղից: Նախատեսվում էր հարձակում Ղարաբաղի վրա, որտեղ գտնվում էր Կասսանյան Կանայանը (Կո): Կարմիր բանակի գործադիր մոսկովյան Քարվանսարա ոգևորելու էր հայ բոլշևիկներին, որոնք խոստովանում էին բարձրացնելու Քարվանսարա-Դիլիջան սարածիններում: Նոր-նոր ՀՀ մեծ ֆառաֆներում բոլշևիկյան ելույթները ճնշած կառավարությունն իր բոլոր ուժերը նետելու էր

այդ ուղղությամբ, ինչի հետևանքով Կոն գրկվելու էր օգնություն ստանալու հնարավորությունից: Նա օգնություն չէր կարող ստանալ նաև Չանգեզուրից, որտեղ սկսվել էին բոլշևիկների խռովությունները, և սեղի ղեկավարությունը լարում էր ուժերը՝ դրանք ճնշելու համար¹⁴:

Մայիսի 21-ին ՀՀ կառավարությունը բողոքի նոստ ուղարկեց Ադրբեջանի բոլշևիկյան ղեկավարությանը՝ նշելով, որ երկու երկրների միջև դաստերազմական գործողություններ չեն սկսվել և Քարվանսարայի դեղիքը սեղի կտրելու քյուրիմացությունների¹⁵: Կրանից հետո Կարմիր բանակի հիշյալ «գործադիր» մասն Դիլիջան ու այնտեղ մայիսի 21-ին հեղկոմ հաստեցեցին¹⁶: ՀՀ կառավարությունը Դիլիջան ուղարկեց կառավարական զորքեր և կամավորական զորամասեր, որոնք շուտով ազատագրեցին Դիլիջանը¹⁷:

¹³ Արաբյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1998, էջ 438:
¹⁴ «ԲԵՀ», 1998, թիվ 1, էջ 22-23:
¹⁵ Մասունի Կ., էջ 122:
¹⁶ Արաբյան Ս., էջ 424:
¹⁷ Մասունի Կ., էջ 129:



Ալ. Խաչատրյան

Գալիս էր 1920 թ. մայիսի 28-ը՝ ՀՀ անկախության հռչակման երկրորդ տարեդարի օրը, որի նախօրյակին բոլշևիկների ելույթները ճնշված էին ամենուր: Արդեն հայտնի էր դարձել Քարվանսարա և Դիլիջան մասն Կարմիր բանակի գործադիր բուն նպատակը: Մայիսի 23-ին Շուշի էին հասել Կարմիր բանակի զորամասերը, մայիսի 25-ին Կոն իր ջոկատով ստիպված հեռացել էր այնտեղից, և Ղարաբաղը հայտարարվել էր խորհրդային¹⁸: ՀՀ կառավարությունը՝ զբաղված Դիլիջանի ելույթի ճնշումով, ուշացել էր ու կանգնել փաստի առաջ: Իսկ թե Կարմիր բանակի ի՞նչ ուժեր էին խորհրդայնացրել Ղարաբաղը, մեր սեսակետի հիմնական հաստատող փաստն է: Ղարաբաղը խորհրդայնացրել էր Աղստֆայում սեղակաված Կարմիր բանակի 32-րդ դիվիզիան, որն իր գործողական Քարվանսարա մտնելու հաջող օրը հրաման էր ստացել Երևանի դեղի Կարաբաղի սահմանը՝ Թարթառի Երջանում կենտրոնանալու համար¹⁹:

Հայ բոլշևիկների մայիսյան ելույթներին վերաբերող մյուս կարևոր խնդիրը դրսից ստիպվող օգնության և դրա չգալու խնդրի դարձաբանումն է: Որքան էլ որ զարմանալի կթվա, բայց ժամանակաբաժանի սրամաքանությունից բխում էր, որ խորհրդայնացված Ադրբեջանին բոլորովին ձեռնհաս չէր ՀՀ խորհրդայնացումը մայիսին: Այդ են աղագուցում փաստերը: 1920 թ. ապրիլի 29-ին ՀՀ կառավարությունը վերջնազոր ուղարկեց Ադրբեջանի հեղկոմի նախագահին, որտեղ ասվում էր, որ մարտի 22-ից մուսավաթականների բանակը հրի ու սրի է մասնել Ղարաբաղը, որ այդ բանակը այսօր էլ այնտեղ է և անում է նույն բանը: ՀՀ կառավարությանն են հասել լուրեր, որ դրանց օգնության են հասնում նոր ուժեր, այս անգամ արդեն խորհրդային զորքերի սեփական: Հույս էր հայտնվում, որ Ադրբեջանի բանվորագյուղացիական կառավարությունը հավասարիմ կմնա ազգերի ազատ ինֆորմացիան իրավունքին²⁰: Մեկ այլ փաստաթղթի համաձայն, որ թվագրվում է նույն ապրիլի 29-ով, Թիֆլիսի ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը հայտնում էր, որ իրեն ստուգադեպ հայտնի էր դարձել, որ Եվլախը գրաված Կարմիր բանակն առաջ է Երևանում Շուշի ճանապարհով նպատակ ունենալով միանալու Բեմալականների անասոլիական բանակի հետ: Ադրբեջանի ժամանակավոր ժողկոմի նախագահ Մուլբանովը Թիֆլիսի ներկայացուցիչ Բամասովին հաղորդել է, որ Կասսանը իրենց համար վստահավոր չէ, իսկ եթե ՀՀ ղեկավարությունը

փորձի խանգարել Կարմիր բանակի Երևանը, իրենք կդատարանվեն ՀՀ-ի դեմ: Իսկ անասոլիական զորքի հետ միանալը սեղի էր ունենալու ոչ թե Կասսանի, այլ Հայաստանի և, մասնավորապես, Ղարաբաղի, Չանգեզուրի և Նախիջվանի վրայով²¹: Ադրբեջանն այստեղ հեսաղնդում է սեփական Երթ: Եթե Կարմիր բանակն անցնում է երեք վիճելի սարածինների վրայով, ապա դրանց «խորհրդայնացումը», այսինքն՝ կցումը Ադրբեջանին, իրական կերպարան է ստանում: Այն, ինչ չէր կարողացել անել մուսավաթական Ադրբեջանը, անելու էր խորհրդային Ադրբեջանը՝ Կարմիր բանակի ուժերով: Փաստորեն, սարածաբանի միակ խորհրդայնացված երկիր լինելը մեծ հնարավորություններ ու հեռանկարներ էր բացում Ադրբեջանի համար:

¹⁸ «ԲԵՀ», 1998, թիվ 1, էջ 22:
¹⁹ Нагорный Карабах в 1918-1923 гг.", сборник документов, с. 471-472, § 6Р., 1998, ГЗн 1, із 26:
²⁰ Անդ, էջ 441:
²¹ Անդ, էջ 442:



Ս. Օրջոնիկիձե

Այս տպամանեռում Ադրբեջանի բոլշևիկ ղեկավարները ստանում են ՀՀ աղյուսամբել ցանկացող բոլշևիկների դիմում-խնդրանքը՝ նույնպես ՀՀ խորհրդայնացմանը: Ինչ-ինչ, բայց այդ օրերին Ադրբեջանին խորհրդայնացված Հայաստանի տեսք չէր, դեռ ավելին, նրանք դառնում էին այդ օրերին ՀՀ-ի խորհրդայնացնել ցանկացողների կասաղի հակառակորդները: Անկախ ՀՀ-ի դարազայում Կարմիր բանակի անցումը հայ-ադրբեջանական վիճելի տարածքներով սոսկ անցում չէր, այլ նաև դրանց նվաճում ու հանձնում Ադրբեջանին, ինչի հույսն ունեին ադրբեջանցի բոլշևիկները, իսկ խորհրդային Հայաստանի դարազայում այն լոկ անցում էր՝ չկանխորոշելով ոչինչ: Այստիսով, ճիշտ էր Ալ. Խասիսյանը, երբ ղուրում էր, որ՝ ըստ իրեն հասած տեղեկությունների և իր անձնական համոզման, Ադրբեջանը հեռուսթյամբ հանձնվեց բոլշևիկներին, քանի որ հույս ուներ Կարմիր բանակի միջոցով և Թուրքիայի միջնորդությամբ լուծել սեփական տարածքային խնդիրները²²: Դուրս է գալիս, որ Ադրբեջանից օգնություն ստանալը հայ բոլշևիկների կողմից միանություն էր: Այդ նրանք հասկացան Ն. Նարիմանովից օգնություն խնդրելուց անմիջապես հետո և «աղյուսամբության» կենտրոնը նախնական Դիլիջանից տեղափոխեցին Ալեքսանդրապոլ:

Պետք է նշել, որ Ադրբեջանի բոլշևիկները այս նկրտումներին լիովին համահունչ էր նաև Թիֆլիսի Կոմբյուրոյի

բոլշևիկների տպավածքը: Ս. Օրջոնիկիձե միայն մայիսի 22-ին է հեռագրում Վ. Լենինին, թե ՀՀ-ում ծավալվել է բանվորագյուղացիական աղյուսամբություն, Ալեքսանդրապոլի, Կարսի, Մարիդամիբի, Ղարաբիխայի, Դիլիջանի և Քարվանսարայի կայազորները աղյուսամբել են և հռչակել բանվորագյուղացիական իբխանություն: Նշվում էր, որ նրանք օգնություն են ստանում Խորհրդային Ռուսաստանից, չնայած ավելացնում էր, որ Ալեքսանդրապոլի հեղկոմը գոյատևել է միայն 4 օր²³: Ի՞նչ ենք տեսնում: Մայիսի 22-ն է, այսինքն՝ մայիսյան ելույթները ՀՀ-ում ամբողջությամբ ճնշված են, միայն Չանգեզուրն է, որ նոր են միայն սկսվում բոլշևիկյան ելույթներ²⁴: Ս. Օրջոնիկիձե կամ տեղյակ չի եղել հայ բոլշևիկների ելույթների մասին, ինչն անհավանական է, կամ էլ դիտարկում ու է հաղորդում դրանց մասին: Երբոր տեսակետն այն է, որ քանզի ՀՀ խորհրդայնացումը, անկասկած, մայիսին Խորհրդային Ռուսաստանի օրակարգում դրված չէր, աղյուս հայ բոլշևիկների ելույթների մասին ժամանակին կամ ուշացումով Մոսկվային տեղեկացնելը ոչ մի նշանակություն չուներ: Կարելի է կարծել, որ Ս. Օրջոնիկիձեի հեռագրի նույնպես Չանգեզուրում նոր-նոր սկսվող բոլշևիկյան ելույթներից օգուտ քաղել էր, այսինքն՝ այդ դարձվակով այնտեղ Կարմիր բանակի գործառնաք մտնելը: Այստեղ թե այնտեղ, բայց վերաբարադրյալը խոսում է այն մասին, որ հայ բոլշևիկները չէին կարող հույս կադել ո՛չ Ադրբեջանի և ո՛չ էլ Խորհրդային Ռուսաստանի օգնության հետ՝ ՀՀ-ն խորհրդայնացնելու հարցում: Այդ նրանք հասկացել էին դեռևս մայիսի 3-ից 5-ն ընկած ժամանակահատվածում և ավելի դարձ գիտակցեցին մայիսյան ելույթների վճռորոշ օրերին, երբ Ալեքսանդրապոլում և մյուս քաղաքներում հաստատվել էր նրանց իբխանությունը: Մայիսի 12-ին Թիֆլիսից Ղարաբիխա հասավ Կոմբյուրոյի սուրհանդակ ոմն Բայյան, որը Հ. Նազարբեյանի անունից տպահանջեց հայ բոլշևիկներից անմիջապես մարդ ուղարկել Ադրբեջան և հաղորդել, թե որտեղ է գտնվում Կարմիր բանակը: Այն տեսք է օգնության նետվել կրիսիկական դրության մեջ գտնվող Թիֆլիսի Կոմ-

22 Խասիսյան Ալ., էջ 252-253:
 23 Ալեքիսյան Հ., Մայիսյան աղյուսամբությունը Կոմիներնի նյութերում (1920 թ. մայիս-սեպտեմբեր), Ե., 1981, էջ 9-10:
 24 «Բեհ», 1998, քիվ 1, էջ 22-23:

բյուրոյին²⁵: Աղյուսաֆայում տեղակայված Կարմիր բանակի 32-րդ դիվիզիան, որի հետ էին կադված հայ բոլշևիկների բոլոր հույսերը, տեսք է քսաղ ուղարկվել Կոմբյուրոյին օգնության: Չնայած օրեր անց իրավիճակը փոխվեց, և այդ դիվիզիան հրաման ստացավ քարծվել հարավ ու տիրել Ղարաբաղը:

Տարիներ շարունակ խորհրդահայ տպամբանները հայ բոլշևիկների մայիսյան ելույթները որակել են որդես «Հայաստանում քաղաքական իբխանությունը գրավելու նախադայման»²⁶, իսկ սփյուռքահայ տպամբանները՝ որդես հարված նոր կազմավորված և ամրադնդող հանրադեսության քիկունքին²⁷: Որդես տպաստխան այն բանին, թե ինչն ո՞ր «աղյուսամբած» հայ բոլշևիկներին օգնության չեկավ Կարմիր բանակը, խորհրդահայ տպամբանները սովորաքար տպաձառ էին քերում այն, որ Կարմիր բանակը գրադված էր Գանձակի (Գյանջա) և Չաքաբալայի հակահեղափոխական ելույթների ճնշմամբ և դայաբարով Ղարաբաղում ու Չանգեզուրում, որոնք քեղեցին Կարմիր բանակի ու քարությունը²⁸: Դուրս է գալիս, որ ինչ-որ հակահեղափոխական խռովության ճնշումը կամ էլ Ղարաբաղի և Չանգեզուրի դեմ դայաբար իմա՝ դրանց նվաճումը առավել կարևոր էին Խորհրդային Ռուսաստանի համար, քան մի ամբողջ հանրադեսության խորհրդայնացումը: Մեր ուսումնասիրությունից դուրս է այն խնդրի քննությունը, թե իսկադես ինչն ո՞ր Խորհրդային Ռուսաստանի օգնության չեկավ հայ բոլշևիկներին, սակայն վերոհիբյալ տպաձառաբանությունները մնում են սոսկ «արդարացման» խղճուկ փորձեր:

Մեզանում տարբեր առիթներով հաձախ են խոսում այն մասին, որ ՀՀ կառավարությունը ճիշտ կվարվել, եթե 1920 թ. մայիսին իբխանությունը զիջեր բոլշևիկներին: Ոմանք նույնիսկ դասողություններ են անում այն մասին, թե ինչդիսին կլինեին Հայաստանն ու նրա սահմանները, եթե ՀՀ խորհրդայնացումը տեղի ունենար մայիսին: Մեր քննությունը ցույց սվեց, որ իրավիճակը 1920 թ. մայիս ամսին նման դասողությունների տեղ չէր թողնում վերոհիբյալ և հետևյալ տպաձառներով.

1. ՀՀ կառավարությանը դրսից իբխանությունը բոլշևիկներին զիջելու կամ հանձնելու որևէ տպահանջ չի ներկայացվել,
2. որքան հայցնի է, նման տպահանջ կունկրես տեսնով ՀՀ կառավարությանը չի ուղղվել նույնիսկ ՀՀ-ում

մայիսյան ելույթները կազմակերպած հայ բոլշևիկների կողմից,

3. եթե անգամ նման տպահանջ ՀՀ կառավարության առաջ դներ ՀՀ բոլշևիկյան մարմինը՝ Արմենկոմը²⁹, աղյուս իբխանությունը հանձնել այդդիսի թույլ և անկազմակերպ կառույցի ուղղակի սխալ կլինեք.

4. ՀՀ-ն լեփ-լեցուն էր արևմտահայ գաղթականներով, որոնց համար խորք էր բոլշևիկյան գաղափարախոսությունը, և հենց նրանք էին, որ բոլոր ջանքերը ներդրեցին մայիսյան ելույթների ճնշման գործում³⁰,

5. իրենց լոգունգներում հայ բոլշևիկներն օգտաքործում էին այնդիսի արտադեսություններ, ինչդես օրինակ՝ «Կեցցեն Կարմիր Ադրբեջանն ու Կարմիր Թուրքիան», ինչդես նաև հենվում էին ՀՀ-ում բնակվող քրոնության վրա³¹: Դա նույնպես էր այն բանին, որ քսերը կամ հեռանում էին նրանց քարերից, կամ էլ խուսափում նրանցից: Ըստ որում, հենց այն, որ հայ բոլշևիկները հույս էին կադում քրոնության հետ, ցույց էր սալիս, որ նրանք չէին վայելում բնակչության լայն մասաների համակրանքը և զգում էին մարդկային ռեսուրսների տակաս: Մակայն հայ ժողովուրդը չէր մոռացել իր ոչ վաղուցվա բեռամիներին՝ Թուրքիային ու Ադրբեջանին, որոնք, ինքնըստինքյան հասկանալի է, չէին դարդրել այդդիսին լինելուց,

6. ի վերջո, ելնելով վերոհիբյալից՝ բոլշևիկների մայիսյան ելույթները տեսք էր որակել սոսկ որդես խռովություններ, որոնց կազմակերպիչների հետ իբխանությունը հանձնելու մասին խոսելն ինքնին անիմաստ ու անլուրջ է: ՀՀ-ն երկու տարվա դժվարին ձանադարհ անցած և քրծված տեսություն էր, որ հիմնվել էր քուրական բանակի դեմ տարած փառադանծ հաղթանակների հիմքի վրա: Թեկուզ և աղքատ ու սովյալ գաղթականներով լեցուն, այն կազմակերպված տեսություն էր, իսկ յուրաքանչյուր տեսության և նրա կառավարության

25 «ՄԱՀ», էջ 106:
 26 Ալեքիսյան Հ., էջ 18:
 27 Փիլոսոֆիկ Ռ., Հայաստանը ՀՅԴ-բոլշևիկ յարաբերությունների ոլորում 1917-1921 թթ., Ե., 1997, էջ 170:
 28 Каднишев А., с. 289.
 29 Բամ՝ ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտե:
 30 Մասունի Կ., էջ 122:
 31 Անդ:



դարձականությունն է դաժադանել սեփական դեսականությունը ամեն ճեսակ խռովությունից:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչո՞ւ, իմանալով, որ դրսից օգնություն չի գալու և վստահ չլինելով սեփական ուժերին, հայ բոլշևիկները սկսեցին «աղքատսամբությունը», աղա դասասխանը հստակ է. նրանք համոզված էին, որ եթե «աղքատսամբություն» սկսեն և կանգնեցնեն Խորհրդային Ռուսաստանին և Կարմիր բանակին փաստի առաջ, կստիպեն նրանց կամա թե ակամա գալ իրենց օգնության: Սակայն նրանց այդ ծրագրերն ի դերս ելան:

Ի վերջո սանք մեր եզրակացությունները և գնահատականները.

1. բոլշևիկների մայիսյան ելույթները ՀՀ-ում ի սկզբանե դասադարձված էին, քանի որ սեղի բոլշևիկները թույլ էին ու անկազմակերպ,

2. նրանք զրկված էին դրսի օգնությունից,

3. նրանք օգնագործում էին սխալ և չարդարացված կարգախոսներ՝ իրենց դեմ հանելով արևմտահայ գաղթականությանը,

4. նրանք հենվում էին ՀՀ թրևության վրա և հույս կադում նույնիսկ Թուրքիայի օգնության հեճ,

5. բոլշևիկները չէին վայելում ժողովրդի լայն մասսաների համակրանքը, ինչը նդաստեց նրանց «աղքատսամբության» ճնճմանը:

Այս ամենի լույսի սակ հայ բոլշևիկների ելույթը միանճանակ դեճ է որակել որդես խռովություն, որը հարված հասցրեց ՀՀ-ին՝ նդաստելով նրա թուլացմանը և թուրքական հարձակման համար հարթելով հեճ ճանադարհ: ՀՀ-ից հեռանալուց հեճո նույնիսկ նրանք գունդ կազմեցին Ադրբեյջանում և կռվում էին ՀՀ-ի դեմ³²:

³² Токарежеский Е., Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, с. 277: